ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22-ը հուլիսի 2024թ.
Ժամը **11**[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱՎ ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ.Ուստյան,
ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիքալվացարարային բաժնի ավագ սպա Մ. Երամյան:
Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ԹԱՎ իրային ծառայության պետի ՊԺԿ՝ գնդապետ Գ Թովմասյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Արսենյան

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Արսենյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Արսենյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԲԻԳ ՖԵՍԹ» ՍՊԸ
2	«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ա. Արսենյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Բացառությամբ ներքոգրյալների՝
՝- ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում գնային առաջարկում գնման առարկայի անունը սխալ էր նշված , ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ի հայտը:
- «ԲԻԳ ՖԵՍԹ» ՍՊԸ-ի հայտի Հավելված N 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագում բացակայում են սույն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող հակաբորբոքային նյութերի առկայության, ոչ շատ սուր բույրի, փաթեթավորման և արկղերի պիտակավորման մասին հստակ նշված պահանջները, ինչպես նաև / Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար ՀՀ ՋՈՒ ՌԲՎ հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ծառայությունը պետք է իրականացնի և ներկայացնի ապրանքատեսակի բաղադրության և որակի վերաբերյալ լաբորատոր փորձաքննություն: Այն ցուցանիշների մասով, որոնց համար եթե ՀՀ ՊՆ ՌԲ ԱՎ հիգիենիկ և համաճարակային անվտանգության ծառայությունը չի ներկայացնի, ապա մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված և/կամ արտոնագրված, իսկ անհրաժեշտության դեպքում նաև էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված եզրակացություն,իսկ դրա անհնարինության դեպքում մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխանության սերտեֆիկատ/ տեխնիկական բնութագրի մաս կազմող նախադասություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի գնահատման նիստը և առաջարկել ընկերությանը սույն ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նիստը շարունակվել է 25.07.2024թ.

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Արսենյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակիցներ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումը	գինը		անվանումները	գինը		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	ածիլվելու նյութեր /սափրվելու փրփուր/	հատ	22000	8 558 000	«Բիգ ֆեսթ» ՍՊԸ	6 875 000	8 250 000	«Բիգ ֆեսթ» ՍՊԸ	6 875 000	1 375 000	8 250 000
								«ՄԵԾ ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ	8 616 666 67	1 723 333 33	10 340 000
2	օճառի տարա /օճառի ման/	հատ	22000	1 078 000	ՉԿԱՅԱՑԱԾ						

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ա. Արսենյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը 25.07.2024թ.-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակից հայտարարել՝

1.«ԲԻԳ ՖԵՍԹ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 2-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12 ծածկագրով ընթացակարգը չի կայացել՝ համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել) :

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Արսենյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Գ.Ուստյան

Գնահատող Մ. Երամյան

Գնումները համակարգող՝ Ա. Արսենյան